

3515

Հ Գրնդաբար Գ

Հայ Լեզուի

ստացիոն գրք

4-րդ տիպ

491.99-8  
7-23

4 Դրոշմ  
1901

2010

7002



ՀԻՄՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱԹՆԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

# ԸՆՏԵԼԱՐԱՆ

## ՀԱՅ ԼԵԶՈՒԻ

(37)

### ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

### ԱԲԱԶԻՆ ԳԻՐԳ

Այբբենարանէն անսիջապէս ետք

ՅՕՐԻՆՆՑ

ՍԻՐԱՏ ԿԵԻԹԵԱՆ

### ՉՈՐՐՈՐԴ ՏԻՊ

Ա.Զ.Գ. ԿԵԴՐ. ՎԱՐՁ. ՈՒՍՈՒՄՆ. ԽՈՐՀՐԴՆ ՎԱԿԵՐԱՑՈՒԱԾ

معارف نظارت جلیله سنک ۳۲۲ نومرولی رخصتنامه سیه

طبع و نشر اولمشدر

91.99-8

7-23

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1901





91.99-8  
-23

# ԸՆՏԵԼԱՐԱՆ

## ՀԱՅ ԼԵԶՈՒԻ

կր'

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Ա.ՌԱԶԻՆ ԳԻՐԳ

Այբբենարանէն անմիջապէս ետքը

ՅՕՐԻՆԵՑ

ՍՄԱՆ ԴԱԻԹԵԱՆ

### ՉՈՐՐՈՐԴ ՏԻՊ

Ա.ԶԳ. ԿԵԳՐ. ՎՈՐԶ. ՈՒՍՈՒՄԵՆ. ԽՈՐՀՐԴԷՆ ՎԱԻԵՐԱՅՈՒԱԾ

معارف نظارت جايله سنك في ۱۱ سنه ۳۱۵ تاريخا  
و ۳۷۹ نومرولى رخصتنامه سيله طبع اولمشدر

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1901

31551-4.2

« Ը Ն Տ Ե Լ Ա Ր Ա Ն » Ը

Շարունակութիւնն է

« Պ Ա Տ Կ Ե Ր Ա Չ Ա Ր Դ Ա Յ Բ Բ Ե Ն Ա Ր Ա Ն » Ի Ն

Որ հրատարակուած է

Գ Ա Ի Թ Ե Ա Ն Գ Ո Ր Ե Ա Կ Ա Լ Ո Ի Թ Ե Ա Ն Կ Ո Ղ Մ Է



( 2738  
39 )

14540-58



Խա՛չ, օգնէ՛ ինձի



Աղբր <sup>(*)</sup>	Անգղ	Արկղ	Գառն
Համր	Մանր	Տասն	Վագր
Տագր	Փոքր	Խաչն	Դաչն
Կոճղ	Նօսր	Տետր	Մախր
Մեղր	Լիտր	Տարր	Ծաղր

Սանտր	Բարձր	Թանձր
Կուարր	Քաղցր	Կարծր

[\*] Ծան. — Կարդա՛ Ազգր, Համր, Եւայն:

Տ. ՕՆՉԻ

Բզէզ	Դգալ	Դպիր	Մսուր
Թզուկ	Ժխոր	Կզակ	Կճիճ
Կշիռ	Մշակ	Մշուշ	Պսակ
Պտուղ	Վհուկ	Տգեղ	Տռուկ
Փշատ	Քսակ	Քսան	Քսու

Ծան. — Կարդա՛ Բրզէզ, Թրզուկ, Եւայլն:

---

Բզէզն ու ճանճը միջատ են :  
Փշատն ու տանճը պտուղ են :  
Դաշտ ու լեռ մշուշ պատեր է :  
Թզուկը կարճ ու պզտիկ մարդ է  
Իսկ հսկան շատ երկայն ու մեծ :

---

Կշիռը երկու նժար ունի :  
Դգալով ապուր կ'ուտենք :  
Դպիրը կ'երգէ ժամին մէջ :  
Ի՞նչ տգեղ է քսու տղան :  
Կնիկը կճիճին մէջ կաթ լեցուց :



[ Տե՛ս նախորդ ծանօթութիւնը ]

Բլուր	Հմուտ	Կրակ	Պսակ
Բրիչ	Հնոց	Վտակ	Պնակ
Բլիթ	Զմեռ	Վրան	Գտակ
Գրիչ	Մրուր	Շրեշ	Գրեխ
Դրախտ	Նշան	Տրեխ	Բրուտ

---

Գլուխ	Ճրագ	Քչոց	Լծակ
Դրամ	Նման	Նպար	Նժար
Զրահ	Շնիկ	Նկար	Խթան
Սրահ	Պնակ	Խցան	Սկիհ
Լուիկ	Սլաք	Սղոց	Բղուկ

---

Խմոր	Սրինգ	Սրունք	Դրամ
Խրատ	Սնունդ	Փղոսկր	Քնար
Ծնունդ	Ծրար	Քղանցք	Կնիք
Կռուկ	Կրօնք	Բժիշկ	Կտուր
Գլուկ	Մլուկ	Ճճի	Շնորհ

---

Կարդա՛ Յըլ - բակ, Գրբ - պան :

Բլբակ	Բժժանք	Գնտակ
Գրպան	Զմբուխտ	Թրթուր
Հնձան	Խշտիք	Խնձոր
Մնդիկ	Կղպաք	Ժժմակ

---

Ճպուռ	Մկրատ	Մտրակ
Մրբիկ	Նշխար	Նշտրակ
Բլթակ	Զրհան	Սմբակ
Տնտես	Ցնցուղ	Փչրանք

---

Զբօսանք <sup>(*)</sup>	Սպաս	Սկիզբ
Սկուճիկ	Սպունգ	Ստահակ
Սպիտակ	Սպանդ	Ստակ
Զկեռ	Ստամոքս	Սպաս

---

[\*] Ծան. — Կարդա՛ Ըգբօսանք, բսկունդ, եւայլն :

Ի Ի

Բիւր	Գիւղ	Թիւր
Դիւր	Խիւս	Հիւս
Հիւսն	Հիւր	Չիւթ
Սիւն	Ճիւղ	Խիւս
Նիւթ	Շիւղ	Չիւն
Ալիւր	Աղբիւր	Թոժիւն
Բիւրեղ	Բոմբիւն	Դիւցազն
Եղջիւր	Չամբիւղ	Երկիւղ
Չեփիւռ	Ընծիւղ	Կնիւն
Հերիւն	Հիւսիս	Միւռոն
Մըջիւն	Անկիւն	Դիւրին

---

ԻԻ = ԵԻԻ

Իւր	Հարիւր	Կորիւն
Իւղ	Արիւն	Իւղոտ



Ա Ի , Ե Ի , Ի Ի

Աւար	Աւագ	Աւազ
Աւան	Աւեր	Բեւեռ
Գաւառ	Գաւիթ	Ջաւակ
Գաւիթ	Գաւակ	Թաւիչ
Կաւիճ	Հիւանդ	Հրաւեր
Չաւար	Նաւազ	Նաւակ
Շաւիղ	Տաւիղ	Բաւիղ
Աւազան	Գաւազան	Աւազակ

---

Բաւ	Գրաւ	Գրիւ
Դեւ	Չեւ	Խեւ
Չրաւ	Թաւ	Թիւ
Թեւ	Կռիւ	Ազնիւ
Անճրեւ	Արեւ	Բարեւ
Բնաւ	Նաւ	Հովիւ
Պառաւ	Պատիւ	Պարզեւ
Ստեւ	Բնաւ	Անիւ
Արմաւ	Տերեւ	Խոնաւ
Կաբաւ	Կեղեւ	Հազիւ
Հալաւ	Հաշիւ	Համբաւ
Հարաւ	Կտաւ	Հաւ
Լաւ	Իրաւ	Կաւ

ՈՒ = Վ. (Ձայնաւորէ առաջ

Աստուած	Թշուառ
Ստուար	Նուազ
Առուակ	Դիպուած
Լուացք	Կալուած
Պատրաստ	Հիւսուածք
Պատուել	Հաշուել
Ստուեր	Արուեստ
Նուէր	Աղուէս
Պատուէր	Քուէ
Պուէտ	Շուէտ
Մատուրներ	Ձեռուրներ
Ոտուրներ	Սուին
Ընքուի	Աչուրներ
Պատուիրան	Նուիրել
Զինուոր	Աղուոր
Հովուութիւն	Առուոյտ



Յ (Բառին սկիզբը) = Հ

Յաղթ	Յանդ	Յարդ	Յարկ
Յովտ	Յորդ	Յօդ	Յօնք
Յա տուկ	Յա կինթ	Յա ճախ	
Յա մառ	Յան ցանք	Յա ջող	
Յա ուջ	Յաս միկ	Յա տակ	
Յար դա նոց	Յար մար	Յս տակ	
Յա ւա նակ	Յիշա տակ	Յէնարան	

Յ (Բառին մեջեղը) = Ի

Այդ	Այլ	Այծ	Այս
Այդ	Այն	Այր	Բայց
Խայծ	Կայծ	Կայմ	Գայլ
Գայռ	Չայն	Պայտ	Փայտ
Հայր	Մայր	Եղբայր	
Այգի	Կայծակ	Փայլակ	

Յ (Բառին ծայրը) = Ի

Այ	Հայ	Վայ	Ճայ
Բայ	Դերբայ	Մակբայ	Խոյ

Յ (Բառին ծայրը) = անձայն

Կուգայ	Կուլայ	Կուտայ
Կը յուսայ	Կ'երթայ	Կը կարդայ
Ապագայ	Սատանայ	Ծառայ
Քրիստոնեայ	Ընծայ	Կրեայ
Հրեայ	Ծառայ	Յուգայ
Մեղայ	Երախայ	Քաջանայ
Պապկայ	Շուկայ	Մանանայ

ՈՅ (Բառին մեջտեղը) = ՈԻԻ

Ոյժ	Բոյն	Բոյս	Գոյն	Լոյս
Խոյս	Կոյս	Կոյր	Յոյս	Յոյն
Հոյն	Յոյց	Խոյր	Մոյգ	Քոյր
Նշոյլ	Ողջոյն		Հանգոյց	
Թակոյկ	Մակոյկ		Հասոյթ	
Անգոյն	Համբոյր		Տժգոյն	
Անբոյն	Վատոյժ		Հաճոյք	

ՈՅ (Բառին ծայրը) = Օ

Հաճոյ	Բրածոյ	Անհաճոյ
Տարածոյ	Կոփածոյ	Հաւաքածոյ



ՈՒՏԵԼԻՔ ՈՒ ԽՄԵԼԻՔ

Հաց	Գինի	Խորտիկ
Ջուր	Միս	Հրուշակ
Պանիր	Թան	Քաքար
Հաւկիթ	Շաքար	Մեղր
Մածուն	Իւղ	Կարկանդակ
Կաթ	Սեր	Ձուաղեղ
Սուրճ	Ասուր	Օշարակ

Հարց. Ի՞նչ է հացը. — Պատ. Հացը ուտելիք է:

Հարց. Ի՞նչ է կաթը. — Պատ. Կաթը խմելիք է:

Հ. Ի՞նչ գրեցով կը կապուի օտարակ բառը, քանի՞ վանկ է:  
[Յաճախակի կրկնել այս վարժուժիւնները, բարձրաձայն, բոլոր բառերուն համար]:

**Մե՛նք կ'ուտենք հաց, պանիր, հաւկիթ և ուրիշ բաներ:**

**Ջուրը կը խմենք: Շաքարը կ'ուտենք:**

**Պղտիկ տղաք կաթ կ'ուտեն:**

**Կերակուրի տտեն մարդիկ գինի կը խմեն՝ ուժովնալու համար:**

**Միսն ու իւղը շատ սննդարար են:**

**Օշարակն ու խահուէն խմելիք են:**

**Շաքարով, ալիւրով եւ իւղով կը շինեն հրուշակ:**

**Մեղրով կամ շաքարով կը շինեն օշարակ:**

2738  
39

Երբ անօթի եմ, հացը շաքարի պէս  
կ'ուտեմ: Մայրս ինձի կ'ուտայ նաեւ  
պանիր և ուրիշ բաներ՝ հացին հետ  
ուտելու համար:

Հացը ի՞նչպէս կը շինեն, գիտէ՞ք:  
Արտերէն ցորենը կը բերեն, ջա-  
ղացքին մէջ կ'աղան՝ ալիւր կը շինեն:  
Ջուրով կը շաղեն ալիւրը տաշտին մէջ:  
Եւ խմոր կը շինեն թրելով: Առանց ա-  
ղի հացը կը կոչուի բաղարջ:

Խմորը կը կտրտեն և քիչ մը կ'ըս-  
պասեն որ խաշը հասնի:

Ետքը խմորը փուռը կը դնեն, հոն  
տաք փուռի մէջ հացը կը կարմրի  
կ'եփի:

Աղէկ չեփած հացը մնասակար է

Հարցումներ. — Ի՞նչ է հացը: Հացին հետ ի՞նչ կ'ու-  
տէք: Ո՞վ կը շինէ հացը: Ի՞նչպէս կը շինէ [պասսեցէֆ]: Ի՞նչ է  
արտը, ի՞նչ է ցորենը: Ալիւրը ո՞վ կ'աղայ: Ի՞նչ է բաղարջը:  
Խմորով ուրիշ ի՞նչ ուտելիքներ կը շինուի: Ի՞նչ ըսել է խաշ:

Պ Տ ՈՒ Ղ Ն Ե Ր ՈՒ Մ Ի Ր Գ Ե Ր

Տանձ	Սեխ	Կեռաս
Խնձոր	Չմերուկ	Դեղձ
Թուխ	Շագանակ	Արմաւ
Նարինջ	Կաղին	Թուզ
Ընկոյզ	Նուշ	Սալոր
Չամիչ	Սերկեւիլ	Միրան
Խաղող	Բալ	Յունապ

Հ. Ի՞նչ պտուղներ կը ճանչնաս. [Աշակերտը բերանացի պիտի պատասխանէ առանց գրքին վրայ նայելու]:

Պտուղները կը հասնին ամառը:

Զի հասունցած պտուղները վնասակար են:

Խաղողը ամէն պտուղներէն աւելի օգտակար է, խաղողէն կը շինուի գինի, ուռի, չամիչ, եւայլն:

Խաղողը ծառի վրայ չի բուսնիր:

Ամէնէն առաջ կը հասնին կեռասն բայր:

Պտուղներէն մէկ բանին շորցնելով պահէնք՝ ձմեռը ուտելու համար:

Պտուղներով կը շինենք նաեւ բանդակներ:

Տանձը, խնձորը, նարինջը, սերկեւիլը բոլորչի են:

Սուխորաբար օրը երեք անգամ ճաշ կ'ընենք. նախաճաշ, ցորեկուան ճաշ և ընթրիք :

Երբ սեղանը պատրաստ է, ամէնքս ալ կը նստինք մեր տեղը :

Առջեւնիս կայ պնակ, դգալ, դանակ, անձեռոց, հաց, բաժակ :

Ճաշէն առաջ ու վերջը երեսս խաշ կը հանեմ ու հայր մեր կ'ըսեմ :

Ապուրը կ'ուտեմ դգալով, իսկ միսը կը կտրեմ դանակով եւ կ'ուտեմ պատառաքաղով :

Երբ լաւ աշխատիմ ու դասս սորված ըլլամ, կերակուրը ասորժակով կ'ուտեմ :

Ճաշէն վերջը կը լուացուիմ ու անձեռոցով կը սրբուիմ :

Հարցումներ. — Օրը քանի՞ անգամ կը ճաշէք : Ի՞նչ կը կոչուի այն սենեակն ուր կը ճաշէք : Որո՞նք են սեղանի սպասները : Ի՞նչ ըսել է խաշ հանել, ասորժակ, անձեռոց Ինչո՞ւ համար որոշեալ ժամանակներ ճաշելը լաւ է : Կրնա՞ք ըսել թէ ի՞նչ կ'ըլլայ կերակուրին պատառը բերան զրուելէ վերջը :

Մ Ա Ր Մ Ի Ն Ի Ն Մ Ա Ս Ե Ր Ը

Մազ	Բերան	Կռնակ
Գլուխ	Ակռայ	Թեւ
Ճակատ	Լեզու	Ձեռք
Աչք	Շուրթ	Մատ
Երես	Ծնօտ	Փոք
Ականջ	Վիզ	Ծունկ
Քիթ	Կուրծք	Ոտք

Հ. — Ի՞նչ կ'ընենք աչքով, քիթով, բերնով . . . եւ այլն:

Հ. — Որո՞նք են մարմինին մասերը, ցոյց տուէք:

**Մարդու մարմինն ունի գլուխ, բուն կամ իրան, թեւեր, սրունք:**

Գլխուն վրայ կայ՝ մազ, ճակատ, աչք, երես, քիթ, բերան, ականջ, ծնօտ կամ կզակ:


Ձեռք, աչք բերան, ականջ, քիթ կը կոչուին հինգ զգայարանք:

Իրանին վրայ են՝ ուսեր, կուրծք, փոք, կռնակ, մէջք, ողնաշար:

Սրունքին մասերն են՝ զիատ, ծունկ, ազդր, ոտք:

Հինգ մատները կը կոչուին՝ բութա-  
մատ, ցուցամատ, միջնամատ, մատ-  
նեմատ, ճկոյթ:

4540-58



Դ Պ Ր Ո Յ Ը

Պզտիկ տղաք ամէն օր դպրոց կ'երթան կրթուելու համար :

Հոն կարգալ, գրել, հաշուել կը սորվին :


Եթէ դպրոց չերթան, դաս չառնեն, բան չսորվին, ի՞նչ կ'ըլլայ անոնց վիճակը երբ մեծնան : — խեղճ ու անպէտ կ'ըլլան, ուրիշներուն կարօտ կը մնան :

Ուրեմն դպրոցէն ետ չմնանք, խելօք և ուշագիտ ըլլանք :

Սիրենք ու յարգենք մեր վարժապետն ու դաստիարակը :

Անո՛նք կուտան մեզի՝ բարի խրատներ ու օգտակար դասեր, մեզ կը կրթութեն ու կը սիրեն իրենց զաւկին պէս :

Հարցումներ. — Պզտիկ տղաք ո՞ւր կ'երթան : Ինչո՞ւ կ'երթան : Հոն ի՞նչ կը սորվին : Ի՞նչ կ'ըլլայ դպրոց չգացողը : Մեզի ի՞նչ կ'ընեն մեր վարժապետները :



Մ Ա Ր Դ Ե Ր

Հայր	Մօրաքոյր	Քեռայր
Մայր	Պապ	Փեսայ
Քոյր	Մամ	Հարս
Եղբայր	Կնքահայր	Մանչ
Հօրեղբայր	Կնքամայր	Աղջիկ
Մօրեղբայր	Զաւակ	Խնամի
Հօրաքոյր	Ծնողք	Ամուսին

Հ. — Դուն ի՞նչ ազգականներ ունիս, Ձեր ընտանիքին մէջ քանի՞ հոգի կայ :

Հայր, մայր ու զաւակներ մէկ ընտանիք կը կազմեն :

Հօրաքոյրը, քեռայրը, քեռիկիներ ազգականներն են :

Տղաք շատ կը սիրեն իրենց ծնողքը : Ես ունիմ պապ մը որ շատ ծեր է, անիկա մեզ կ'օրհնէ :

Հօրեղբայրս ունի երկու աղջիկ ու մէկ մանչ զաւակ :

Ընտանիք մը կ'ունենայ նաեւ փեսաներ, հարսեր, խնամիներ, կնքահայր ու կնքամայր :

Ըսէ՛ տեսնեմ, տղա՛ս, դուն ի՞նչ ազգականներ ունիս :

Գիտե՞ս անոնց անունները :

Տ Ղ Ա Ք Ո Ւ Ծ Ն Ո Ղ Ք

---

Տղաք պէտք է բարի ըլլան ու քա-  
ղաքավար. պէտք է խելօք ու հնա-  
զանդ վարուին :

Պէտք է յարգեն, պատուեն ու սի-  
րեն իրենց ծնողքը, իրենց եղբայր-  
ները, քոյրերն ու ազգականները :

Ծնողք կը խնամեն ու կը պահպա-  
նեն իրենց զաւակները, հագուստ և  
ուտելիք կուտան անոնց : Երբ տղաք  
հիւանդ են, ծնողք կը հսկեն անոնց  
վրայ. կը դարմանեն ու հոգ կը տանին  
անոնց աղէկութեան համար, գիշեր  
ցորեկ կ'աշխատին որպէս զի մեծցը-  
նեն ու կրթեն : Տղաք շատ խեղճ  
կ'ըլլան եթէ ծնողքի խնամքէն զուրկ  
մնան :

Հարցումներ. — Ի՞նչպէս պէտք է ըլլան տղաք : Ի՞նչ ընե-  
լու են իրենց ծնողքին : Մեր հայրն ու մայրը մեզի համար  
ի՞նչ կ'ընեն : Ո՞վ կը հոգայ մեզ՝ երբ հիւանդ ըլլանք : Ո՞ր տղաք  
խեղճ կ'ըլլան :

---

Հ Ա Գ Ո Ի Ս Տ Ն Ե Ր

Գլխարկ	Պարեգօտ	Շրջագգեստ
Գտակ	Մուճակ	Գօտի
Վերարկու	Կօշիկ	Ներքնոց
Բաճկոն	Տրեխ	Մուշտակ
Տափատ	Գուլպայ	Վարապանակ
Շապիկ	Բօղ	Հողաթափ
Վարտիք	Անդրավարտիք	Գիշերնոց

Հ. — Ի՞նչ հագուստներ կը հագնիս դուն, Բանի՞ տեսակ ոտնամաններ գիտես: Ի՞նչ է մուշտակը.

Այր մարդերը իրենց գլուխը կը ծածկեն գլխարկով, գտակով կամ ֆէսով, եւ կը հագնին վերարկու, բաճկոն ու տափատ:

Կիները կը հագնին պարեգօտ ու շրջագգեստ:

Գօտին մէջքը կը փաթթեն:

Զմեռը մուշտակ կը հագնին չի մըսելու համար:

Վարտիքն ու շապիկը ներքին ըզգեստներ են:

Այլեւայլ ոտնամաններ կան տրեխ, մուճակ, կօշիկ, մոյկ, կիսակօշիկ, հողաթափ, սանդալ (նալըն):

Ք Ա Ղ Ո Ւ Ա Մ Ք


Հ. — Ի՞նչ է կարկանդակը, ջուրը, ընկոյզը, սալորը, ոտ-  
քը, ուսը, հօրեղբայրը, կնքահայրը, շապիկը, վերաբերուն. խա-  
ղողը, ծեռքը, գլուխը, զինին, շաքարը, մամը, տափատը, եղ-  
բորորդին, պանիրը, կրունկը, եւայլն:

Պ. — Կարկանդակը ուտելիք է, ջուրը խմելիք է, եւայլն:

---

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ԱՂՕԹՔԸ

Ո՛վ մեծդ Աստուած,  
Որ մեզ տըւած  
Ես՝ բարի հայր  
Ու գըլթոտ մայր,  
Մաքրէ՛ մեր սիրտն  
Ու մեր հոգին.  
Տո՛ւր մեզ շընորհք,  
Զըլլանք անհոգ,  
Ընենք աղօթք,  
Կենանք խելօք,  
Պարկեշտ ու հեզ,  
Եւ սիրենք Քեզ:



ԽԱՂԱԼԻԿՆԵՐ (\*) ՈՒ ԽԱՂԵՐ

Վէգ	Պահուըտուկ
Փող	Աչքկապուկ
Հող կամ շունջան	Վախնիվախ
Գնտակ	Գնտամուղ
Փամփուշտ	Կաղնիկաղ
Պուպրիկ	Սիրուբիր
Սուլիչ	Ծափիկ
Թռուցիկ	Դար ու կոճատ
Սահնակ	Չուանախաղ

Հ. Ի՞նչ խաղալիկներ ունիս : Ի՞նչ է սիրուբիրը : Ի՞նչ է հողը : Ի՞նչ է հասեւառիկը : Ուրիշ խաղեր ու խաղալիկներ ալ գիտէ՞ր :

**Թռուցիկը կապով կը թռցնեն օդին մէջ : Սուլիչը կը սուլեն :**

**Չմեռ ատեն սահնակով կը սահին սառոյցին վրայ :**

**Փոքրիկ աղջիկներ կ'ունենան պուպրիկ ու պէպէք , անով կը խաղան՝ դասերնին լաւ մը սերտելէ ետքը :**

**Եղբայրս ունի փող ու փայտէ ձի :**

**Վէգը ոսկոր է , հողը փայտ է :**

**Լաստիկ գնտակը թեթեւ է եւ շատ բարձր կ'ելլէ օդին մէջ :**

[1] Դասատուն յիշեալ խաղալիկները պատրաստ կ'ունենայ տղոց ցոյց տալու համար :

Ջ Բ Օ Ս Ա Ն Ք

---

Երբ դասերնիս աւարտի, զանգակ  
կը զարնուի և մենք կարգով դուրս  
կ'ելլենք, բակը կամ դպրոցին պար-  
տէզը՝ զբօսանք ընելու համար:

Լաւ աշխատող տղաքը շատ եռան-  
դով կը խաղան: Իսկ ծոյլերը, դաս  
չգիտցողները, զբօսանքէ կը զրկուին:

Ես ընկերներուս հետ կաղնիկաղ  
յը խաղամ, շրջանակ կը դարձնեմ:  
Ունիմ նաեւ հոյ:

Հոլը խարազանով կը դառնայ:

Զբօսանքի ատեն շատ ուրախ ենք,  
կը ցատքենք, կը վազենք, երբեմն  
ալ կ'երգենք:

Դպրոցի տղաքը գնտակ ալ կը խա-  
ղան. մեծ տղաք մարմնամարզ կ'ընեն:

Հարցումներ. — Զանգակը ե՞րբ կը հնչէ. — Ինչո՞ւ պար-  
տէզ կ'ելլենք. — Ո՞ր տղաք զբօսանքէ կը զրկուին. — Ի՞նչ խա-  
ղեր կը խաղար. — Ի՞նչ կ'ընէք զբօսանքի ատեն. — Ի՞նչ օ-  
գուտ ունի մարմնամարզը:

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՐԿԱՆՆԵՐ (\*)

Մատիտ	Քարտախտակ	Սրբիչ
Գրիչ	Կաւիճ	Կոթ
Թուղթ	Պայուսակ	Ծայր
Քանոն	Տետրակ	Մելան
Գիրք	Կաղամար	Բազմոց
Գրասեղան	Գրատախտակ	Զանգակ
Աթոռ	Քարգրիչ	Կարկին

Հ. — Ի՞նչ բանի պէտք ունիս դպրոցին մէջ. Ուրիշ ինչե՞ր կան հոն. Կարկինը ի՞նչ բանի կը գործածուի:

Դպրոցին մէջ աշակերտը շատ մը բաներու պէտք ունի, ինչպէս՝ գիրք, թուղթ, գրիչ, մելան, մատիտ, քանոն, տետրակ:

Քարտախտակին վրայ գրելու համար քարգրիչ կը գործածեն: Սետախտակին վրայ գրելու համար ալ պէտք է ճերմակ կաւիճ:

Մելանը հեղուկ է, բայց քանոնը պինդ մարմին է և կը շինուի փայտէ կամ երկաթէ:

Դասատուն զանգակը կը հնչեցնէ ցորեկը՝ ճաշի ատեն եւ իրիկունը՝ արձակումի ժամուն:

[1] Տե՛ս նախորդ ծանօթութիւնը:

Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Տղաք պէտք է քաղաքավար ըլլան  
իրենց խօսքով ու շարժումներով :

Ասով կը հասկցուի թէ լաւ կրթու  
թիւն առած են :

Քաղաքավար տղան անմիջապէս  
պատասխան կուտայ երբ իրեն բան  
մը հարցնեն. ուրիշներն անհանգիստ  
չ'ըներ, և ամենուն հաճելի կ'ըլլայ :

Երբ դպրոցէն տուն դառնայ, հօրն  
ու մօրը ձեռքը կը պագնէ, ճամ  
բան կամ տունը յարգելի անձ մը  
տեսնելուն պէս, կը բարեւէ կամ  
ձեռքը կը համբուրէ :

Քաղաքավար տղան շնորհակալու  
թիւն կը յայտնէ, երբ մէկը իրեն  
բան մը տայ, իրմէ մեծերուն առջեւ  
լուռ ու շնորհալի կը գտնուի և իր  
ընկերներուն հետ սիրով կը վարուի :

Հարցումներ : — Ի՞նչպէս պէտք է վարուին տղաք : —  
Ի՞նչ կ'ընէ քաղաքավար տղան : — Իսկ անքաղաքավար տղա՞ն,



Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ի Ա Ն Օ Թ Ն Ե Ր

Աւետարան	Գրակալ	Սաղաւարտ
Խաչ	Աշտանակ	Վարագոյր
Ջահ	Գանձանակ	Ծածկոց
Կանթեղ	Սկիհ	Պատկեր
Բուրվառ	Շուրջառ	Քչոց

2. — Որո՞նք են եկեղեցիի անօթները, ի՞նչ բանի կը ծառայէ գանձանակը, ի՞նչ կ'ընեն խոսնկը, — ի՞նչ պաշտօնեաներ կը տեսնես եկեղեցիին մէջ :

Եկեղեցիին սուրբ տեղ է. հոն կը հաւաքուինք աղօթելու համար :

Խորանին վրայ շարուած են խաչ, աւետարան, պատկեր, աշտանակներ :

Պատարագի ատեն՝ խորանին վարագոյրը կը քաշուի և կանթեղները, շահերն ու մոմերը կը վառուին :

Գպիրները կ'երգեն՝ քչոցը շարժելով :

Քահանան՝ զլուխը սաղաւարտ դըրած և շուրջառ հագած է. Հաւասարէն առաջ և պատարագէն ետքը կը կարգայ Ս. Աւետարանը :

Աւագանին մէջ կը մկրտուին նոր ծնած մանուկները :

Ա Ս Տ Ո Ւ Ա Մ

---

Աստուած կը սիրէ պզտիկ տղաքը .  
Ան բարի է . Ան տուած է մեզի հայր  
ու մայր :

Աստուած լտեղծած է աշխարհս  
և ամէն ինչ որ կայ :

Աստուած ամէն տեղ է , ամէն բան  
կը լսէ , ամէն բան գիտէ :

Երբ երեսս խաչակնքեմ , այսպէս  
կ'ըսեմ . « Յանուն Հօր եւ Որդւոյ եւ  
Հոգւոյն Սրբոյ , ամէն , , » :

Միայն մէկ Աստուած կայ :

Ես կ'ուզեմ բարի ըլլալ որ Աստ-  
ուած սիրէ զիս :

Աստուած ըսաւ . « Պատուէ՛ք ու  
հայրդ ու մայրդ , , » :



Կ Ա Ր Ա Ս Ի Ն Ե Ր

Սեղան	Անկողին	Դգալ
Ժամացոյց	Բարձ	Պատառաքաղ
Հայլի	Վերմակ	Սկաւառակ
Օրօրոց	Կոնք	Պնակ
Շիշ	Շունիթ	Ափսէ
Սափոր	Գաւաթ	Գորգ
Հապտեր	Դանակ	Կապերտ

Հ. — Որո՞նք են տունի կարասիները, ի՞նչ բանի կը գործածուի դգալը, պատառաքաղը, պնակը. իսկ օրօրոցը՝ ի՞նչ ըսել է ժամացոյց:

**Տունի մէջ կը գտնուի սեղան, ժամացոյց, Հայլի, գորգ, եւայլն:**

**Անկողին, բարձ, աթոռ, աշտանակ, լամբար, խալկին, տապակ՝ պիտանի կահեր ու կարասիներ են:**

**Օթոցներու վրայ կը բազմինք Հանգստանալու Համար: Սեղանի վրայ կը ճաշենք: Պնակը, պատառաքաղը, դանակը, դգալը, անձեռոցը սեղանի սպասներ կը կոչուին:**

**Օրօրոցին մէջ կը պառկին երախաները:**

**Անկողինն ու բարձը բամպակով կամ բուրդով կը շինուին:**

Գեղացի մը գնաց իր դրացի Կարօյին և խնդրեց որ էշը փոփ տայ՝ քաղաք երթալ գալու համար : Կարօ, որ չէր ուզեր էշը տալ, ըսաւ . « Երանի՛ր թէ բիշ մը առաջ գայիր, ուրիշ մէկուն տուի հեծնելու համար : »

Խօսքը դեռ բերանն էր, երբ ախօռին մէջ էշը զուայ սկսաւ :

« Ինչո՞ւ սուտ կը խօսիս, եղբայր . էշդ ներսն է եղեր . ահա կը զուայ :

— Ի՛նչ զարմանալի մարդ ես, պատասխանեց Կարօ, ինձի չես հաւատար, իչո՞ն կը հաւատաս : »



Խ Ո Ղ Ա Ն Ո Յ Ի Ա Ն Օ Թ Ն Ե Ր

Ունելի	Տաշտ	Կարաս
Տապակ	Դոյլ	Կասկարայ
Ակիշ	Շերեփ	Բաժակ
Եռոտանի	Կրակարան	Սրճաման
Սան	Ակութ	Սրճատուփ
Քամոց	Պտուկ	Շամփուր
Դանակ	Սակուր	Խալիխ

Հ. — Ո՞ւր կը գտնուի ակուձը եւ ի՞նչ բանի կը ծառայէ:

Հ. — Ի՞նչ պէտք է սուրճ եփելու համար:

Հ. — Ուրիշ ի՞նչ կրնայ գտնուիլ խոհանոցի մէջ:

Խոհանոցի մէջ կը պատրաստուին մեր կերակուրները. ակութին վրայ կը դնեն տապակը կամ սանը որուն մէջ կը լեցնեն ջուր և եփուելիք միտը կամ բանջարեղէնը: Հետը աղ կը խառնեն: Առանց աղի, կերակուրն անհամ կ'ըլլայ: Կրակով կը տաքնայ, կ'եռայ ու կ'եփի կերակուրը: Շերեփով կը լեցնեն զայն պնակներու մէջ եւ պատառաքաղով կ'ուտեն:

Տաշտին մէջ կը թրեն խմորը:

Գինին կը պահեն կարասներու մէջ:

Ամէնքդ ալ տեսած էք թէ ի՞նչ պէս կ'եփեն սուրճը:

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ծ Ք

Հ. — Ի՞նչ է պէպէքը, աչքկապուկը, պայուսակը, ջահը,  
քշոցը, կապերտը, սափորը, տապակը, շամիուրը, սուլիչը,  
քարտախտակը, բուրվառը, անկողինը, խալիինը, գրասեղանը:  
Պ. — Պէպէքը խաղալիկ է, աչքկապուկը . . . :

---

« Ք Ր Ի Ս Տ Ո Ս Յ Ա Ր Ե Ա Ի »

Օ՛ն, մանուկներ, շո՛ւտ արթնցէք,  
Ոսկի արեւ ծագեցաւ,  
Ի՞նչ կեցեր էք, ելէ՛ք, ելէ՛ք,  
Աշխարհ քունէն արթնցաւ :

Մեծ ու պզտիկ՝ մանուկ, այր, կին՝  
Ահա ժամէն դուրս ելան .

« Քրիստոս յարեա՛ւ, , միմեանց ըսին  
Տըւին համբոյր սրբութեան . . . »

« Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց, ,  
Օ՛ն շուտ ըրէք, արթնցէք,  
Բաղարջ, հաւկիթ կուտան տըղոց,  
Առէ՛ք, կերէ՛ք, բերկրեցէ՛ք :

Տ Ա Ն Մ Ա Ս Ե Ր Ը

Պատ	Ծխնելոյզ	Մտտան
Դուռ	Բակ	Աղբիւր
Պատուհան	Շտեմարան	Գուռ
 Սանդուխ	Անկողնոց	Հոր
Դարակ	Խոհանոց	Սիւն
Երդիք	Փայտանոց	Սենեակ

Հ. — Տուն մը ուրիշ ի՞նչ մասերէ կը բաղկանայ :

Հ. — Հիւրանոցն ի՞նչ է : Ի՞նչ կը դրուի մառանին մէջ :

**Տուն մը շատ մասերէ կը բաղկանայ :**

Դուրսի շորս կողմը պատած է պատերով : Դռնէն կը մտնեմ բակը , բակէն նախասենեակ և անկէ հիւրանոց :

Սեղանատան մէջ կը ճաշեն , ննջարանին մէջ կը պառկին , դարակներուն մէջ հագուստ և այլ բաներ կը դնեն . մառանին մէջ կը պահեն նպարներն ու այլևայլ ուտելիքներ :

Սիւներու վրայ հաստատուած է տունին երկրորդ յարկը : Հոն կ'ելեն սանդուխով :

Պատուհաններէն լոյս ու օդ կը մտնէ սենեակին մէջ :

Մ Ա Ք Ր Ո Ի Թ Ի Ի Ն

---

Մաքուր տղան սիրելի է ամենուն .  
ամէնքը աղտոտ ու անհոգ տղոցմէն  
կը պժգան , հեռու կը կենան :

Պէտք է հոգ տանինք որ մեր մար-  
մինն ու հագուստները միշտ մաքուր ,  
լուացուած , կոկիկ ըլլան :

Մենք դեռ պզտիկ ենք , մեր մայրը  
կը մաքրէ , կը կարկտէ՝ մեր լաթերը .  
կը լուայ , կը սրբէ մեր երեսն ու  
ձեռքերը , կը սանտրէ մեր մազերը :

Մաքուր պահելու ենք նաև մեր  
գիրքերն ու տետրակները :

Մաքրասէր տղան քաջառողջ կ'ըլ-  
լայ , իսկ աղտոտ տղան վատառողջ  
կ'ըլլայ :

Հարցումներ . — Ի՞նչ ընելու ենք մաքուր ըլլալու համար :  
Մեզի ի՞նչ կ'ընէ մեր մայրիկը :— Ի՞նչ բաներու հոգ տանելու  
ենք :— Ի՞նչ ըսել է քաջառողջ :— Վատառողջ :— Միայն մաք-  
րութիւնով կրնանք առողջ ըլլալ :

Շ Է Ն Ք Ե Ր <sup>(1)</sup>

Տուն	Բաղնիք	Խրճիթ
Դպրոց	Պանդոկ	Պալատ
Եկեղեցի	Կամուրջ	Ախոռ
Խանութ	Ջաղացք	Կառք
Փուռ	Ագարակ	Շոգեկառք
Մզկիթ	Թատրոն	Նաւ
Վանք	Վրան	Ամարանոց

Հ. — Ո՞ւր կ'եփեն հացը: — Ո՞ւր կը գտնուի կամուրջը: — Ի՞նչ կ'ընեն խանութին մէջ: — Որո՞նք են քու ճանչցած շէնքերդ:

Տեսակ տեսակ շէնքեր կան որոնց մէջ կ'ապրին մարդիկ: Պալատին մէջ կը բնակին թագաւորները, զօրանոցին մէջ՝ զօրքերը, պանդոկին մէջ՝ պանդուխտները, ագարակին մէջ՝ մշակները, վրանին տակ՝ հովիւները, խըրճիթին մէջ՝ աղբատները:

Ոչխարն ունի գոմ, թռչունը՝ բոյն, վայրի կենդանին՝ որջ, մեղուն՝ փեթակ, սարդը՝ ոստայն:

Դպրոցին մէջ կը կարդան, եկեղեցիին մէջ կ'աղօթեն, բաղնիքին մէջ կը լոգանին:

[1] Ուսուցիչը բացատրէ թէ ի՞նչ կ'ընեն այս շէնքերու մէջ:

Հ Ա Ի Ա Տ Բ Ը Դ Ե Ղ Է

Գեղացի մը բժիշկին գնաց իր հիւ-  
ւանդուծիւնը նայել տալու համար .  
բժիշկն անոր բազկերակը քննելէ  
վերջ, գեղագիր գրեց ու գեղացիին  
տալով ըսաւ : « Ազդն առտու ա՛ռ  
աս դեղը՝ կ'աղէկնաս », :

Գեղացին՝ կարծելով թէ այն թուղ-  
թըն է դեղը՝ կատարեալ վստահու-  
թեամբ տուն դարձաւ ու միւս առ-  
տու կլլեց թուղթը :

Եւ իրօք իր հիւանդուծիւնը բոլո-  
րովին անցաւ :

Հաւատքը գեղ է :



Կ Ե Ն Դ Ա Ն Ի Ն Ե Ր<sup>(1)</sup>

Կատու	Կով	Կապիկ
Շուն	Հորթ	Աղուէս
Ձի	Եզ	Նապաստակ
Էշ	Այծ	Մուկ
Ջորի	Ուղտ	Գայլ
Ոչխար	Առիւծ	Ողնի
Գառնուկ	Փիղ	Գոմէշ

Հ. — Ջատեցէք ընտանի ու վայրի կենդանիները:

Հ. — Ո՞ր կենդանիներ օգտակար են մեզի: — Ուրիշ կենդանիներու անուններ ալ գրեցէք:

Կենդանիներն օգտակար են մեզի: Շուներ մեր հաւատարիմ պահապանն են. ձին, ջորին ու էշը մեր բեռները կը կրեն:

Ոչխարն ու այծը մեզի կուտան միս, բուրդ ու կաթ: Ուղտը անապատներու մէջ կը գտնուի: Առիւծը կենդանիներու գլխաւորն է. Կապիկը մարդուս ձեւերն ու շարժումները կը կեղծէ:

Կենդանիներ կան որ տուններէ հեռու լեռներն ու անտառները կ'ապրին: Ասոնք կը կոչուին վայրի կենդանի:

[1] Գասատուն կենդանիներու վրայ կարելոր տեղեկութիւններ կուտայ:— Ի՞նչ կ'ընեն, ո՞ւր կ'ապրին, ի՞նչ օգուտ ունին մարդոց. ի՞նչ ծայներ կը հանեն:

Ձ Ի Ն Ո Ի Է Շ Ը

---

Օր մը ձին ու էշը միասին բեռ կը կրէին. էշը՝ որ շատ բեռցուած էր, ըսաւ ձիուն. « Կ'աղաչեմ, ե'ղբայր, սա բեռիս կէսը դո'ւն առ. շատ ծանր է, չեմ կրնար տանիլ »:

Ձին չուզեց օգնել իր ընկերին. բիչ մը ետք, էշը իր ծանր բեռին տակ կբեցաւ մնաց ու մեռաւ:

Տէրը իսկոյն քակեց բեռը, իշուն մորթն ալ հանեց և ամէնքը մէկէն ձիուն բեռցուց: Այն ատեն ձին իր ըրածին վրայ ցաւելով կը տրտնջար. « Ի՛նչ անխելք եմ եղեր. բեռին մէկ մասը առնել չուզելուս համար, հիմա ամբողջ բեռը տանելէ զատ, իշուն մորթն ալ կը տանիմ կոր. . . »:

Հարցումներ. — Ի՞նչ կ'ընէին ձին ու էշը: — Էշն ի՞նչ ըսաւ ձիուն: — Ի՞նչ ըրաւ ձին: — Ի՞նչ ըրաւ էշը: — Յետոյ ի՞նչ պատահեցաւ: — Ի՞նչ սորվելու ենք այս առակէն:

---

Թ Ռ Չ Ո Ի Ն Ն Ե Ր

Աղանի	Հաւ	Արագիլ
Ճնճղուկ	Հնդկահաւ	Թութակ
Սոխակ	Անձեղ	Կաքաւ
Արծիւ	Բադ	Աքաղաղ
Ծիծառ	Ագռաւ	Սագ

Հ. — Գիտէ՞ք ուրիշ թռչունի անուններ: — Քանի՞ ոտք ունին, թռչունին մարմինը ի՞նչ մասեր ունի:

Հ. — Որո՞նք են վայրի թռչունները, — Որո՞նց միտը կ'ուտուրի:

Մենք կ'ուտենք նաև թռչուններուն միտը որ շատ համեղ է: Թռչուններն ալ կրնան ըլլալ վայրի ու ընտանի:

Հաւը, բադը, սագը, քաղաղը ընտանի թռչուններ են:

Սոխակը շատ սիրուն ձայն ունի:

Թութակը ճիշտ մարդու նման կըրնայ խօսիլ վարժութեամբ:

Թռչուններ կան որ ձմեռը կ'երթան տաք երկիրներ կը բնակին, եւ գարունը նորէն կուգան իրենց բոյնը շինել մեր տուններուն վրայ:



Բ Ա Ր Ի Ք Ը Ր Է Ը Ն Կ Ե Ր Ի Դ

---

Յակոբ չար տղայ մ'էր . որ մը փոքրիկ Նշանին գլխարկը վեր նետեց եւ գլխարկը ծառին վրայ մնաց : Նշան շատ նեղացաւ . չէր կրնար ծառն ելլել վասն զի պզտիկ էր : Գիտէր ալ որ ծնողքը պիտի յանդիմանէին զինք , եթէ առանց գլխարկի տուն երթար :

Բայց Գրիգոր , որ բարեսիրտ տղայ էր , ծառին վրայ մագլցեցաւ , գլխարկն առաւ Նշանին նետեց՝ ըսելով . « Ա՛ռ , փոքրիկ բարեկամս , ահա գլխարկդ , ա՛լ մի՛ լար , , » :

Նշան ուրախութեամբ առաւ գլխարկը , շնորհակալութիւն յայտնեց իր Գրիգոր բարեկամին եւ միտքը դրաւ որ ա՛լ չխաղայ այն չար Յակոբին հետ :

Ծան . — Նոյնը պատմել տուէր բոլոր աշակերտներուն զատ զատ . Այլ եւ այլ հարցումներով ճոխացուցէք նիւթը :

---

Մ Ի Զ Ա Տ , Ս Ո Ղ Ո Ի Ն , Ո Ր Գ

Սարդ	Շերամ	Ճպուռ
Մրջիւն	Մարախ	Հու
Խխունջ	Տզրուկ	Մլուկ
Օձ	Ճանճ	Մժեղ
Գորտ	Մեղու	Ճճի
Գորեխ	Թիթեռ	Կրիայ

Հ. Ի՞նչ է մեղուն, իսկ մողէ՞զը, երկմա՞յրը, Թրթու՞րը, Կը ճանչնա՞ք մետաքս շինող որդը . Ի՞նչ կ'ուտէ, Ի՞նչ փոփոխու-  
Թիւններ կը կրէ :

Մրջիւնը, մարախը, ճանճը, մե-  
ղուն ու թիթեռը միջատ են, իսկ օձը,  
տզրուկը, ճճին ու խղունջը սողուն  
կը կոչուին, ինչու որ գետնի վրայ  
սողալով կը բալեն :

Ասոնցմէ քիչեր մեզի օգուտ ունին  
ինչպէս մեղուն՝ իր մեղրով, շերամը՝  
իր մետաքսով :

Իսկ լուն, ճանճը, մլուկն ու մը-  
ժեղը ամառ ատեն սաստիկ կը նեղեն  
մեզ իրենց խայթուածքով :

Կրիան իր պատեանին մէջ կ'ապրի  
միշտ :

Երկակենցաղ կենդանիներ ալ կան :

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ծ Ք

Ի՞նչ է խոհանոցը, սանդուխը, ջաղացքը, նաւակը, խոզը, մուկը, անծեղը, արագիլը, մրջիւնը, տզրուկը, մլուկը, պատը, շտեմարանը, պանդոկը, նաւամատոյցը, եղջերուն, ծիծառը, ծպուռը, Թրթուրը, եւ այլն :

Պ. Խոհանոցն ու սանդուխը տունի մասեր են, ջաղացքն ու նաւակը շէնքեր են . . . (շարունակեցէք) :

Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ

Ո՞վ խրատեց մրջիւնին  
Գետինը ծակել,  
Ամառ ատեն աշխատիլ՝  
Պաշար հաւաքել :

Արդեօք ուսկի՞ց սորվեցաւ  
Փոքրիկ թռչունը՝  
ձիւղէ, շիւղէ և յարդէ  
Շինել իր բոյնը :

Ո՞վ խրատեց մեղուին  
Ճարտար և աշխուժ  
Ծաղկէն մեղր քաղել,  
Ագնիւ ու անուշ :

— Աստուա՛ծ է այդ վարժապետ  
Բարի, անսահման,  
Ջանացէք միշտ կատարել  
Անոր սուրբ հրաման :

Ծ Ա Ղ Ի Կ Ն Ե Ր Ո Ի Ծ Ա Ռ Ե Ր

Մանիշակ

Կակաչ

Վարդ

Մեխակ

Շուշան

Զիւնծաղիկ

Յասմիկ

Նարգէս

Տանձենի

Խնձորենի

Թղենի

Նոնենի

Կեռասենի

Սալորենի

Արմաւենի

Թթենի

Հ. — Որո՞նք են ծաղիկները :— Ի՞նչ ըսել է տանձենի :—  
Նարգէսը ծաղիկ է , իսկ քամո՞ցը , արմա՞ւը :— Ի՞նչ կ'ըլլայ  
երբ պտուղի մը անունին ծայրը **ենի** մասնիկը դնենք :

**Ծաղիկներ ու ծառեր կը տեսնեմ  
պարտէզներուն մէջ : Ծաղիկն ունի  
անուշ հոտ ու աղուոր տեսք :**

**Ծառերէն կը քաղենք համեղ պը-  
տուղներ : Կան նաև վայրի ծառեր  
որ պտուղ չեն տար , ինչպէս մայր ,  
նոճի , կաղամախի , եւայլն :**

**Ամենէն առաջ կը բուսնի ձիւնծա-  
ղիկը : Վարդենին պզտիկ տունկ մ'է :**

**Ծաղիկներն ունին ցօղուն , բաժակ ,  
թերթ եւ անուշ հիւթ զոր մեղու-  
ները կը ծծեն՝ մեզի մեղր պատրաս-  
տելու համար :**

ՎԱՐՂՆ ՈՒ ԱՆՄԵՌՈՒԿԸ

---

Վարդանուշ խելացի, ուշիմ ու գեղեցիկ աղջիկ մ'էր : Օր մը պարտէզը կը պտտէր մայրիկին հետ, տեսաւ վարդն ու անմեռուկը, տեսաւ ու զարմանքով հարցուց. « Ինչո՞ւ, մայրիկ, ինչո՞ւ արդեօք անմեռուկը, որ համեստ կերպարանք մ'ունի, միշտ թարմ ու դալար կը մնայ, մինչդեռ վարդը մէկ օրուան մէջ կը թուամի :

— Սիրելի՛ աղջիկս, պատասխանեց մայրը, ահա՛ այս բանիս մէջ ալ Աստուած իր անհուն իմաստութիւնը ցոյց կուտայ, վաղանցիկ վարդը գեղեցկութեան նշանակ է, իսկ անմեռուկը առաքինութեան :

Հարցումներ. — Ի՞նչպէս աղջիկ էր Վարդանուշ : Մայրիկին հետ ո՞ւր կը պտտէր, Կրնա՞ք ըսել թէ ինչո՞ւ կը պտտէր : Ի՞նչ տեսաւ Վարդանոյշ : Ի՞նչ ըսաւ մօրը : Մայրը ի՞նչ պատասխանեց. Ի՞նչ կը հասկնար աս առակէն :

---

Ք Ո Յ Ս Ե Ր

Արմէշիք. — Յորեն, Գարի, Հաճար, Վարսակ,  
Բրինձ, Եգիպտացորեն, Կորեկ :

Ընդհեղէն. — Բակլայ, Լուբիա, Սիսեռ, Մաշ,  
Ոսպ :

Բանջարեղէն. — Անուխ, Ռահան, Սամիթ,  
Շողգամ, Ստեպղին, Հազար, Սմբուկ, Բողկ, Ա-  
զատքեղ, Դդում, Վարունգ, Մոխ, Սխտոր :

Հ. — Ի՞նչ է հազարը, ոսպը, բրինձը, ազատքեղը, վարսա-  
կը, սիսեռը, կակաչը : Որո՞նք են բանջարեղէնները :

Բանջարանոցին մէջ կը մշակուին  
այլ եւ այլ բոյսեր որոնք պէտք են  
մեր սնունդին համար :

Ոսպով ու բրինձով ապուր կը շինեն :  
Շողգամով, ստեպղինով, կաղամ-  
բով, դդումով ու գետնախնձորով կը  
պատրաստուին տեսակ տեսակ կե-  
րակուրներ :

Չիերն ու միւս կենդանիները կը  
սիրեն ու կ'ուտեն խոտ, առուուոյտ ու  
գարի :

Շատ մը բոյսեր կը չորցուին ու  
ձմեռուան կը սրահուին :

Հ Լ ՈՒ Ս Ի Ս Ա Կ

---

Միսակ պզտիկ տղայ էր, շատ քաղաքավար ու հլու: Հայրն ըսած էր անոր թէ անվայել է սեղանի վրայ ուրիշէն բան ուզել. պէտք է սպասել որ, կարգը գալուն, իրեն ալ տրուի:

Օր մը որ սեղան նստած էին ու ամէնքը կ'ուտէին, Միսակ տեսնելով որ իր բաժինը տալու մոռցեր են՝ ըսաւ. « Հայրի՛կ, բիշ մը աղ տուր, »:

— Ի՞նչ պիտի ընես, հարցուց հայրը:

— Եթէ ինձի ալ միս տան, վրան պիտի ցանեմ, » պատասխանեց տղան:

Այն ատեն, հայրը նշմարելով որ Միսակին միս չէ տրուեր, անոր բաժինն ալ տուաւ:

Հարցումներ. — Ի՞նչ ըսել է հլու: — Ի՞նչ տեսակ տղայ էր Միսակ: — Հայրը ի՞նչ պատուէր տուած էր: — Օր մը ի՞նչ պատահեցաւ: — Պատմեցէք ու բացատրեցէք իմաստը:

---

Ա Ր Հ Ե Ս Տ Ա Ի Ո Ր Ն Ե Ր

Հացագործ	Փերեզակ	Հովիւ
Նպարավաճառ	Սափրիչ	Կօշկակար
Դերձակ	Բժիշկ	Բրուտ
Դարբին	Սպասաւոր	Կառապան
Երկաթագործ	Ժամագործ	Մշակ
Հիւսն	Ներկարար	Ձկնորս
Մսավաճառ	Պարտիզպան	Դեղագործ

Հ. — Ի՞նչ արհեստաւորներ կը ճանչնաք, ի՞նչ կ'ընեն անոնք:

Հացագործը հաց կ'եփէ, նպարավաճառը նպարեղէններ կը ծախէ, դերձակը հագուստ կը կարէ, դարբինն ու երկաթագործը կը շինեն երկաթե գործիքներ, հիւսնը տուն կը շինէ, փերեզակը մանր մունր բաներ կը ծախէ, սափրիչը մազ կը կտրէ և մօրուք կ'ածիլէ, բժիշկը հիւանդներ կը դարմանէ, պարտիզպանը ծաղիկներ ու ծառեր կը տնկէ:

Ըսէ՛ք, տղա՛ք, ի՞նչ կ'ընէ հովիւը, կօշկակարը, բրուտը, կառապանը, մշակը, ձկնորսը, որսորդը, դեղագործը, ժամագործը, ներկարարը, եւ այլն:

Հ Ն Ա Ջ Ա Ն Դ Ո Ի Թ Ի Ի Ն

---

Կրթեալ տղան անտրտունջ կը հնազանդի իր հօրը, իր մօրը և իր մեծերուն : Անոնց խօսքը կը կատարէ, երբ պատուիրեն այս ինչ բանն ընել կամ այն ինչ տեղը երթալ, կոչտուլթեամբ չի պատասխաներ « Չեմ ըներ, չեմ երթար » :

Գիտէ՞ք, ո՞րչափ ծանր կուգայ այսպիսի պատասխան մը՝ մեր ծնողքին : Անոնց կամքը կատարել մեր առաջին ու գլխաւոր պարտքն է :

Հնազանդ տղան զգոյշ կ'ըլլայ նաև բանի մը ձեռք դպցնելու, երբ ծրնողքն արգիլած են : Մինչեւ որ տղայ մը չմեծնայ, խելահաս չըլլայ, հարկ է որ հնազանդի իր մեծերուն, վասն զի չհնազանդելով՝ շատ անգամ ինք իրեն կը վնասէ :

---

Գ Ո Ր Ծ Ի Ք Ն Ե Ր (1)

Կանգուն	Գայլիկոն	Թի
Մկրատ	Աքծան	Մանգաղ
Հարթուկ	Մուրճ	Գերանդի
Սղոց	Սալ	Բրիչ
Խարտոց	Փքոց	Արօր
Դուր	Հերիւն	Կամն
Քերիչ	Բահ	Սամիք
Մամուլ	Տրմուխ	Հոսելի

Հ. Ըսէ՛ք ուրիշ գործիքներու անուններ :

Ամէն արհեստաւոր իրեն յատուկ գործիքներ ունի . դերձակը՝ կանգուն , մկրատ , ասեղ , մատնոց , և այլն : Հիւսնը՝ ուրագ , սղոց , արծան , դուր , եւլն . Գարբինը՝ մուրճ , սալ , փքոց , խարտոց : Կօշկակարը՝ հերիւն , թակ , ձեւիչ , յեսան : Մսափաճաւորը՝ դանակ , սակուր , կացին , կշիռ , եւայլն : Ժամագործը . . . : Պարտիզպանը . . . : Կառավարը . . . : Մշակը . . . :

(Շարունակեցիք այսպէս բոլոր արհեստաւորներու համար , յետոյ ըսէ՛ք ի՞նչ կ'ընեն նոյն գործիքներով) :

[1] Գասատուն բացատրէ թէ ի՞նչ կընեն այս գործիքներով :

Հ Ա Ի Ա Տ Ա Ր Ի Մ Պ Ա Հ Ա Պ Ա Ն Ը

Մարդ մը մառանին մէջ պնակ մը սեր պահած էր հիւրերու համար : Մառանին մէկ կողմը, ծակին մէջ, մուկ մը նշմարելով՝ շուտ մը կատուն կը մտցնէ հոն, սրպէս զի պահծու սերը մուկին կեր չըլլայ :

Բայց մեր պահապան կատուն իրա՛ւ շատ աղէկ կատարեց իր լրտեսի պաշտօնը. — առաջ մուկը կերաւ, ետքն ալ՝ սերը :

Մարդը զղջաց անոր վստահելուն համար, բայց շատ ուշ էր :

Կատուն հաւատարիմ կենդանի չէ : Տղա՛ք, ըսէ՛ք նայիմ ո՞րն է հաւատարիմ կենդանին :



Ձ Է Ն Ք Ե Ր Ո Ի Ձ Ա Ր Դ Ե Ր

Հրացան	Օղ
Թ՛նդանօթ	Ապարանջան
Ատրճանակ	Մատանի
Դաշոյն	Գնտասեղ
Թուր	Շղթայ
Դանակ	Մանեակ
Ցրկիճ (գարապինա)	Կամար

Հ.— Ի՞նչ է օղը .— Իսկ թո՞ւրը .— Ի՞նչ կը լեցնեն հրացանին ու ատրճանակին մէջ՝ արծակելու համար .— Ուրիշ ի՞նչ գարդեր գիտէք :

1. Հրագէնիտը՝ որոնք արծակուած աւտեննին, բոց ու մուխ կը հանեն. ինչպէս հրացան, ատրճանակ, երկփող, ցրկիճ, թ՛նդանօթ, եւ այլն :

2. Հասու գէնիտը՝ որոնք են դաշոյն, դանակ, թուր, սուին, և այլն :

Կիները կը գործածեն այլ եւ այլ առարկաներ՝ զարդի համար, ինչպէս օղականջը կախելու համար, ապարանջան՝ թէն անցընելու համար, մատանի՝ մատը դնելու համար, պսակ ու քայռ՝ գլխու համար, եւ ոսկիէ կամ ադամանդէ մանեակ՝ պարանոցը կախելու համար :

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ծ Ք

Հ. — Ի՞նչ է շուշանը, հաճարը, ոսպը, սամիթը, հովիւը, մուրճը, դաշոյնը, մանեակը, վարդը, եգիպտացորենը, սիսեռը, հազարը, հացագործը, արօրը, ապարանջանը, Քնդանօթը, եւ այլն:

Պ. — Շուշանը ծաղիկ է, հաճարը . . . :

---

Պ Ջ Տ Ի Կ Բ Ա Ն Ե Ր

Պզտիկ ռոպէներ կը շինեն մի ժամ:

Պզտիկ խորհուրդներ կը կազմեն մատեան:

Պզտիկ սերմերէ կ'աճին ծառ, ծաղիկ:

Պզտիկ շիթերէ կը բղխի առուիկ:

Պզտիկ բարիքով սէր, հետ հաւատքին,

Երկիր երկնի հետ անշուշտ կը կապուին:



Պ Ի Տ Ա Ն Ի Ա Ռ Ա Ր Կ Ա Ն Ե Ր

Անձեռոց	Ծխատուփ	Կոճակ
Սանտր	Հովանոց	Ժապաւէն
Խոզանակ	Գաւազան	Ժանեակ
Օճառ	Քսակ	Ծոս
Լուցկի	Ստակ	Փողկապ
Մոմ	Թղթապանակ	Թաշկիինակ
Մոխրաման	Բանալի	Չեռնոց

Հ. — Ի՞նչ կ'ընեն անձեռոցով. — Իսկ սանտրո՞վ. — Ի՞նչ կը լեցնեն քսակի մէջ. — Ուրիշ պիտանի առարկաներ ալ ըսէք :

Առաւօտուն լուացուելու համար պէտք է օճառ : Երեսս ու ձեռքերս սրբելու համար՝ անձեռոց. գլուխս սանտրելու համար՝ սանտր, և լաթերուս փոշին ու ցեխը մաքրելու համար խոզանակ պէտք է : Լուցկիով կը վառենք ճրագ ու կրակ :

Անձրեւի համար անձրեւանոց՝ և արևի համար հովանոց կը գործածենք. Երբ հայրս ինձի ստակ տայ, քսակի կամ գրամապանակի մէջ կը պահեմ, պէտք եղած ատեն ծախսելու համար :

Մեզի պիտանի են կոճակ, փողկապ ու մանաւանդ թաշկիինակ :

Ժ Ա Մ Ա Յ Ո Յ Ց

Գրիգոր մօրմէն ստացաւ փոքրիկ, ոսկեզօծ ժամացոյց մը: Մայրը պատուիրած էր որ ժամացոյցը չբանայ, բայց Գրիգոր, որ անհնազանդ տղայ մ'էր, մայրը դուրս ելլելուն պէս, բացաւ ժամացոյցը: Մէջը կար փոքր անիւ մը, որ կը դառնար ու « թըբ թըբ » ձայն կը հանէր:

Այն ատեն հաճոյք զգաց անոր դրպչելու՝ գնտասեղով մը, և ահա ձայնը դադրեցաւ: Գրիգոր ականջին կը մօտեցնէ ժամացոյցը, կը շարժէ, ասդին անդին կը դարձնէ. ի զո՛ւր . ա՛լ « թըբ թըբ » չ'ըներ. ժամացոյցը կեցեր է:

Գրիգոր շատ նեղացաւ այս բանիս համար, վասն զի պիտի զրկուէր սիրուն ժամացոյցէն և պիտի յանդիմանուէր անհնազանդութեանը համար:

**Հարցումներ.** — Գրիգոր ի՞նչ ստացաւ մօրմէն: Ի՞նչպէս տղայ էր Գրիգոր: Մայրը ի՞նչ պատուիրած էր: Գրիգոր ի՞նչ ըրաւ՝ շարունակեցէք պատմել: Ի՞նչ ըսել է ոսկեզօծ, անհնազանդ, անիւ, հանոյք, դադրեցաւ, պիտի զրկուէր, պիտի յանդիմանուէր, անհնազանդութիւն: Ի՞նչ կը հետեւի այս մանրավէպէն:

Գ Ո Յ Ն Ե Ր (1)

--	--	--

Ճերմակ

Կարմիր

Կանաչ

--	--	--

Կապոյտ

Դեղին

Սև

Ըսէ՛ երեք առարկայ՝ կարմիր գոյնով, երեք՝ ճերմակ գոյնով, երեք՝ սև, երեք՝ կապոյտ, երեք՝ կանաչ, երեք՝ դեղին:

**Աճէ՛ն առարկայ գոյն ունի, ինչպէ՛ս՝**  
**ձիւնը, կաթը, բամպակը ճերմակ են.**  
**գինին, արիւնը, վարդը կարմիր են.**  
**խոտը, վարունգը, հազարը կանաչ են.**  
**երկինքը, լեղակը, ծովը կապոյտ են.**  
**ոսկին, սաթը, ծծումբը դեղին են.**  
**ածուխը, մուրը, խահուէն սև են:**

Բայց կան բաներ ալ որոնք յայտնի  
 և որոշ գոյն չունին, ինչպէ՛ս ջուրը:

Տղա՛ք, ըսէ՛ք տեսնեմ, ի՞նչ գոյն  
 ունի մածունը, մեխակը, արեւը, ա-  
 զատքեղը, հողը, կիրը, եւայլն:

[1] Նշանակուած գոյներով ներկեցէք բառակուսիները:

Ա Մ Ա Ն Ն Ե Ր

Հ. Ի՞նչ ամանի մէջ կը պահուի ջուրը :

Պ. Ջուրը կը պահուի կուժի, սափորի, շիշի, թակոյկի, գաւաթի, կարասի, տակառի մէջ :

Հ. Ինչո՞վ կը խմեն գինին, ջուրը, թէյը :

Պ. Ջուրը, թէյը, գինին կը խմեն գաւաթով :

Հ. Իսկ սո՞ւրճը :

Պ. Սուրճը կը խմեն փոքրիկ բաժակներով կամ սկահակներով :

Հ. Սեղանի վրայ ի՞նչ բաներ կը բնանան գտնուիլ :

Պ. Սեղանի վրայ կը գտնուին ճերմակ սփռոց, ջուրի շիշ, գաւաթներ, պնակ, պատառաքաղ, գանակ, անձեռոց ու ջնջոց կամ սրբիչ :

Հարցումներ. — Ո՞վ կը շինէ կուժ, սափոր, եւայն. — Ի՞նչ բանէ կը շինէ : — Տակառը ի՞նչ բանէ կը շինուի. — Թէյը ի՞նչ է եւ ի՞նչպէս կը պատրաստուի. — Թէյը աւելի օգտակար է թէ սուրճը. — Պատառաքաղն ու գանակը ինչո՞վ շինուած են :

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ի Բ Ա Ժ Ա Ն Ո Ի Մ Ն Ե Ր (1)

Գարուն	Գիշեր
Ամառ	Արշալոյս
Աշուն	Երէկ
Ձմեռ	Այսօր
Տարի	Վաղը
Ամիս	Կիրակի
Շաբաթ	Երկուշաբթի
Օր	Երեքշաբթի
Ժամ	Չորեքշաբթի
Առտու	Հինգշաբթի
Կէս օր	Ուրբաթ
Իրիկու	Շաբաթ

Հ.— Որո՞նք են շաբթուան օրերը .— Որո՞նք են տարիին չորս եղանակները եւ 12 ամիսները :

**Ժամանակը այլ և այլ մասերու բաժնուած է . մէկ տարին՝ այսինքն 365 օրը՝ կ'ընէ տասուերկու ամիս . այս 12 ամիսները չորս եղանակի բաժնուած են . գարուն , ամառ , աշուն , ձմեռ : Մէկ ամիսը չորս շաբաթ կամ երեսուն օր է . մէկ օրը՝ 24 ժամ՝ ցորեկ ու գիշեր : Մէկ շաբաթը եօթն օր է :**

[1] Եղանակներու պէսպիսութեան ու ժամանակի բաժանման վրայ բացատրութիւններ տուէք :

Կ Ր Թ Ո Ւ Թ Ի Ի Ն

---

Կրթութիւնը մարդուս ազնուութիւն ու շնորհք կուտայ. դպրոցի մէջ կը ստանանք կրթութիւնը եւ ուսմունքը որ ապագային պատճառ պիտի ըլլան մեր լաւութեան եւ յաւաքդիմութեան :

Կրթեալ տղան անվայել ու անպարկեշտ խօսքերէ եւ կոշտ վարմունքէ զգոյշ կ'ըլլայ, ուրիշներուն սիրտը չի վշտացներ, չար ընկերներէ հեռու կը փախչի եւ պարկեշտ ու խոհեմ կը վարուի :

Կրթութիւնը, պարկեշտութիւնը, խոհեմութիւնը մարդոց յարգն ու պատիւը կ'աւելցնեն : Անոնք որ ուսմունք ու կրթութիւն ստացած են, կրնան իրենց անձը սիրելի ընել եւ իրենց արժանիքը ցոյց տալ :

Հարցումներ. — Կրթութիւնը մարդուս ի՞նչ կուտայ. ո՞ւր կրնանք կրթուիլ : Ի՞նչ ըսել է ապագայ, անվայել, վեճաքնել, կոճ, կը ճանչնա՞ք կրթեալ եւ անկիրթ տղաքներ :

Ա Շ Խ Ա Ր Հ

Երկինք	Ծիածան	Անձրեւ
Երկիր	Օդ	Ձիւն
Արեւ	Ամպ	Սառոյց
Լուսին	Հրդեհ	Լոյս
Աստղ	Կարկուտ	Շուք

Հ. Որո՞նք են աշխարհի չորս կողմերը: Արեւը ո՞ր կից կը ծագի: Ամպէն ի՞նչ կը գոյանայ, ի՞նչ ձեւեր կ'առնէ լուսինը:

**Մեր բնակած երկիրը կը որ է. աւնոր մեծ մասը ջուրով պատած է:**

Երկինքը կան անհամար աստղեր: Լուսինը կը փայլի գիշեր ատեն, իսկ արեւը ցորեկին:

Երկինքէն կը տեղայ կարկուտ, անձրեւ, ձիւն:

Չմեռ ատեն օդը կը ցրտէ, ջուրերը կը սառին եւ տղաք սառոյցին վըրայ սահնակ կը խաղան կամ ձիւնագնտակ շինելով կը զբօսեն:

Անձրեւի ժամանակ արեւին դէմ կէս բոլորակ գիծ մը կը տեսնուի՝ զանազան գոյներով: Այս է ծիածանը որ կը կոչուի նաև աղեղ կամ նշանակ:

Տ Ա Ն Տ Ի Կ Ի Ն

---

Հ. Ի՞նչ կ'ընէ կին մը :

Պ. Կին մը իր տան մէջ կար կը կարէ , կերակուր կ'եփէ , լուացք կ'ընէ , ճերմակեղէնները կ'արդէ , սուրճ կը խարկէ և աղօրիքով կը մանրէ , զաւակները կը խնամէ , կը խրատէ , դպրոց կը դրէ , տունը կ'աւլէ , կը սրբէ , կը մաքրէ , ամանները կը լուայ , կով կը կթէ , մածուն կը մակրդէ , սեր , պանիր ու կարագ կը շինէ , թան կը հարէ , ոչխար կը խուզէ , խմոր կը թրէ , թոնիր կը վառէ . հաց , կարկանդակ և ուրիշ ուտելիքներ կը պատրաստէ :

Փոքրիկ Շուշան այս ամենը տեսնելով՝ ինքն ալ կ'օգնէ մօրը եւ կամաց կամաց կը սորվի տուն կառավարել :

---

Յ Ա Մ Ա Ք

Քաղաք	Դաշտ	Հրաբուխ
Գիւղ	Լեռ	Կղզի
Փողոց	Անտառ	Անապատ
Ճամբայ	Հող	Բլուր
Պարտէզ	Քար	Ձոր
Այգի	Փայտ	Մարգագետին
Քարայր	Արտ	Հանք

Հ. Որո՞նք են ցամաքին բաժանումները: Ի՞նչ կը գտնուի պարտէզի մէջ: Ի՞նչ է անապատը: Ի՞նչ քաղաքներ, գիւղեր ու լեռներ կը ծանչնար:

**Մարդիկ քաղաք ու գիւղ հաստատած են իրենց բնակութեան համար. քաղաքին մօտ պարտէզ ու այգիտընկած են:**

Մէկ թաղի մէջ շատ մը տուններ կը գտնուին որոնք բաժնուած են փողոցներով ու ծառուղիներով:

Դաշտերուն մէջ արտեր կան ուր վարուցան կ'ընեն:

Անտառներուն մէջ կան խիտ խիտ ծառեր, հոն կը գտնուին նաև գազաններ:

Բլուրներն ու լեռները ձորերով ու հովիտներով զարդարուած են:

Կան լեռներ որ կրակ կը ժայթքեն:

Հ Ա Ն Ք Ե Ր

---

Անտառները մեզի կուտան փայտ՝  
վառելու եւ շէնքեր շինելու համար :

Հողէն կը բուսնին ծառեր, ծաղիկ-  
ներ ու բանջարեղէններ :

Հողին մէջ խառնուած են այլ եւ  
այլ նիւթեր . — հանքածուխ, նաւթ,  
մետաղներ, ծծումբ, ադամանդ, կիր :

Այլ և այլ մետաղներ կան, ինչպէս  
ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ, ա-  
նագ, լնոսկի կամ բլաթին, եւ այլն :

Մարդիկ կը գործածեն մետաղները՝  
այլ և այլ բաներ շինելու . ոսկիով ու  
արծաթով կը շինեն դրամ . երկաթով  
կը շինեն բանալի, կղպաք, ակիշ, դոյլ,  
եռոտանի, բահ, տապար, թուր,  
հրացան, մանգաղ, եւ այլն :

Ադամանդը, յակինթը, զմրուխտը  
թանկագին քարեր են . իսկ կրաքարը,  
չէչաքարը, գաճը և մարմարիոնը հա-  
սարակ քարեր են :

---

Ծ Ո Վ

Ակն	Աղբիւր	Ովկիանոս
Ծոց	Հեղեղ	Նեղուց
Լիճ	Վտակ	Յորձանք
Գետ	Ջրանցք	Ճահիճ

Հ. Ի՞նչ ծովեր ու գետեր կը ճանչնար: Ի՞նչ է լիճը:

Երկիրը կամ ցամաքը պատած է մեծ ովկիանոսներով: Ծովերուն մէջ ծոց, նեղուց, Ջրանցք ու յորձանք կայ: Ճահիճներու մէջ կը բուսնին սէզ և ուրիշ անպէտ բոյսեր:

Գետերու, ծովերու եւ լիճերու մէջ նաւով, շոգենաւով, նաւակով ու առազաստանաւով կը ճամբորդեն եւ մինչեւ հեռաւոր քաղաքներ կ'երթան:

Ծովեզերքը նաւամատոյց կայ ուր կը մօտենան նաւերը՝ ցամաք հանելու համար իրենց բեռներն ու ճամբորդները:

Ծովուն մէջ կ'ապրին տեսակ տեսակ ձուկեր ու խեցիներ:

Ծովէն կը հանեն աղ, սպունգ, մարգարիտ, բուստ, եւ այլն:

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ծ Ք

Հ. Ի՞նչ է խոզանակը, մակոյկը, աշուհը, ամիսը, ուրբա-  
թը, թաշկինակը, ամառը, կոճակը, սուլինը, երկուշաբթին,  
ձեռնոցը, շաբաթը, մոխրամանը, թիկնոցը, դարակը, կարագը,  
մարագը, պատկերը, մելանը, եւայլն:

---

Ինչե՞ր կը տեսնէք աշխարհի մէջ:  
Ե՞րբ կը տեսնէք ծիածանը:  
Ի՞նչ կը պատահի ձմեռը, ամառը, աշուհը, գարունը,  
Յամաքի բաժանումները որո՞նք են:

---

Ո՞ւր կը տեսնէք կաւիճ, կաղամար, զանգակ, եւայլն:  
» » » Աւետարան, խուսկ, զանձանակ, խորան:  
» » » հայլի, ժամացոյց, սնտուկ, աթոռ:  
» » » տաշտ, ակիշ, ակուծ, կասկարայ:  
» » » բակ, երդիք, դուռ, սենեակ:  
» » » ծաղիկ, ծառ, վարսակ, սիսեռ, սխտոր:  
» » » ծիածան, ամպ, աստղ, լուսին, արեւ:

Ի՞նչ կ'ընեն հացը, զինին, թուղթը, սեխը, յունապը, կօ-  
շիկը, գօտին, խուսկը, գիրքը, թռուցիկը, մօմը, բարձը, ցո-  
րենը, բրինձը, սուլիչը, լուբիան, դդումը, օղը, ապարանջանը,  
կոճակը, թղթապանակը, ստակը, եւայլն:


Ի՞նչ կ'ընեն հողով կամ շանջանով, մատիտով, քանոնով,  
բուրվառով, գաւաթով, դգալով, սանով, սակուրով, ունեխով,  
կանգունով, սղոցով, արօրով, բրիչով, հարթուկով, մկրատով,  
հրացանով, դանակով, օճառով, բանալիով, սանտրով, լուց-  
կիով, եւայլն, եւայլն:





21

# ԴԱԻԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ



		Գումբ.
1. Ա. Վարժուծիւն Մանկանց	8րդ Տխոյ	4
2. Բ. » »	6րդ »	5
3. Գ. » »	5րդ »	5
4. Տարրական Քերականութիւն	5րդ »	2
5. Լրացուցիչ Դասընթացք	2րդ »	3
6. Փունջ, Աշխարհաբար Հաւարածոյ	4րդ »	3
7. Փնզակ, Պատկերազարդ	4րդ »	1, 10
8. Երկրորդ Փունջ	2րդ »	6
9. Գործն. Ընթացք Շարադրութեան	3րդ »	3
10. Բանալի Շարադրութեան	2րդ »	7
11. Ընտելարան Հայ լեզուի	4րդ »	2
12. Սկզբունք Համաձայնութ. և շարադասութեան		3
13. <b>ALPHABET FRANCAIS</b>	2րդ Տխոյ	2
14. Տար. Ընթացք Կրօնի Վ. Քն. Առլանեանի	3րդ »	2
15. Պատկերազարդ Այբբենարան (նոր ոճով)	3րդ »	0, 20
16. Յայտագիր Դաւթեան Գործակալութեան	5րդ »	2
17. Ծաղկաբաղ Հաւարածոյ, Միջին Շրջան	2րդ »	4
18. Դպրոցավարութիւն, գործ Emerson E. White ի		5
19. Առաձայատոււմ Հ. Պէննէեանի		5
20. Համառօտ Կրօնագիտութիւն Ա. Հարէլեանի		3
21. Սրախ ձայնք, քերթուածներ, Բ. Բարսեղեանի		5
22. Նուէր Հայ մանուկներուն, Ս. Դաւթեանի		1, 20
23. Դատարարական Ազգիկներու, Յուսիկ Վրդ.		3
24. Հրոյի, Գիտութիւններու վրայ դասեր, Գ. Անդր.		5
25. Դատարարական Պատանիներու, Յուսիկ Վրդ.		3
26. ԲԻԻՐԱԿՆ Լրագիր, 1898ի հաւարածուն, Օսմ. լիբա		2
» » 1899ի » » »		1
» » 1900ի » » »		1/2
27. Աշխարհագրութիւն Օսմ. կայսրութեան Գ. Խաչկոնց		3
28. Քերթուածներ, Յակոբճան		5
29. Տղոց Կրօնագիտութիւն, Մկրտիչ Վրդ. Ազաւնունի		4
30. Թուար. Մեղրական դրութեան		5
31. Առաջնորդ Անգղ. Լեզուի, Յ. Վարժապետեան		5
32. Իվանճէլին, Լճնիֆէլլօ, Տ. Լ. [Թերթօն Բիւրակնի]		5
33. Օսմ. Տաղաշարութիւն Ս. Յ. Կուրտիկեան		5
34. Նոր Դպրոց, 10 Պրակի բաժանորդագիր		25
» » » Արտասանման 8 ֆրանք. (3 լուպլ)		
35. Շրջաբերական-Ծանուցազիր ՆՈՐ ԳՊՐՈՅԻ		5
36. Լիակատար Գրացուցակ		5
37. Ծաղկաբաղ Քրիստ. Վարդապետութեան		4

Խորասանճեան խան, Սիրֆէնի, Կ.Պոլիս



